ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Դավիթ Սիմոնյան Ա/Ձ-ն ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/7 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Ա/Ձ Դավիթ Սիմոնյան	Հուշանվերների ցուցադրման և պահպանման համար նախատեսված 3 տեսակի պահարաններ (4 հատ): Պահարանները պետք է լինեն բարձրորակ, դիմացկուն, ֆունկցիոնալ և ներդաշնակ միջավայրին, բոլոր տարրերը պետք է պատրաստված լինեն հստակ չափսերով, մշակված եզրերով, առանց սուր կամ կոպիտ հատվածների՝ ցուցանմուշների անվտանգ պահպանմամբ, փակվող ապակե դռներով, դիտման համար բավարար լուսավորությամբ: Պահարանների հիմքը՝ բարձր խտությամբ MDF և բնական փայտ, ներկված բարձրորակ և էկոլոգիապես մաքուր ներկանյութով, լաքապատված: Դռները՝ թրծված ապակուց, ≥ 5մմ, թափանցիկ, փայտե շրջանակով, մագնիսական կամ մեխանիկական փականով: Դարակները՝ փայտ և ապակի, քաշադիմացկուն, կարգավորվող բարձրությամբ: Լուսավորությունը՝ LED լուսադիոդային համակարգ, տեղադրված բոլոր հատվածների ներքին կողմում, գունային ջերմաստիճանը՝ 3000K (բնական): Ֆուրնիտուրա՝ չժանգոտվող մետաղ (բրոնզ կամ սև պողպատ), Soft-close մեխանիզմով, չխանգարող դիզայնով: Մոդել 1 Երկու երկփեղկ ապակե դռներ՝ փականներով, ներքին լուսավորություն յուրաքանչյուր դարակի վրա, հինգ դարակ՝ կարգավորելի բարձրությամբ, ձևավորված փորագրություններով, ըստ դիզայնի: Քանակը՝ 2 հատ, չափսերը- լայնություն՝ 1800 մմ (±2 մմ), բարձրություն՝ 2200 մմ (±2 մմ), խորություն՝ 450 մմ (±2 մմ): Մոդել

		2 Երկփեղկ ապակե դուռ՝ փականով, ներքին լուսավորություն, կարգավորվող հինգ դարակներով, փայտե փորագրություններ՝ ըստ դիզայնի: Քանակը՝ 1 հատ, չափսերը- լայնություն՝ 900 մմ (±2 մմ), բարձրություն՝ 2200 մմ (±2 մմ), խորություն՝ 450 մմ (±2 մմ): Մոդել 3 Փակվող դռներ՝ փայտե կամ ապակյա ներդիրով, ներքին հատվածը երեսպատված թավշյա կտորով, վերին մասը՝ հարթ մակերեսով ցուցադրության համար, փորագրություններ կամ դասական պրոֆիլներ՝ ըստ դիզայնի: Քանակը՝ 1 հատ, չափսերը - լայնություն՝ 3800 մմ (±2 մմ), բարձրություն՝ 850 մմ (±2 մմ), խորություն՝ 500 մմ (±2 մմ): Ընդհանուր գունային գամման պետք է լինի համապատասխան ցուցասրահի/տարածքի ինտերիերին՝ պատվիրատուի ընտրած երանգով: Պատրաստման փուլում մատակարարը պետք է ներկայացնի գունային նմուշներ՝ հաստատման համար, տեսքն ու կառուցվածքը՝ պատվիրատուի ընտրած դիզայնին համապատասխան (կցվում է): Կահույքը պետք է մատակարարվի պատրաստի կամ մասնակի հավաքված վիճակում, գինը իր մեջ պետք է ներառի բոլոր անհրաժեշտ մասերը, ֆուրնիտուրան, պտուտակները, ամրակները, տեղադրման համար նախատեսված պատի ամրացման միջոցները (ըստ պահանջի): Ապրանքը պետք է տրմադրվի առնվազն 12 ամսվա երաշխիքով, որը ներառում է կառուցվածքային և արտադրական թերությունների անվճար շտկումը: Նյութերի նմուշները (գույն, հյուսվածք, ապակի) համաձայնեցնել պատվիրատուի հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Давит Симонян И/П в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/7 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
1		